ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 125-Ա

<<26>> սեպտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության մասնագետների կողմից կազմված 2023 թվականի նոյեմբերի 6-ի N ՏԾ/ԳՀ/13-18 ակտը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N ՏԾ/ԳՀ/13-18 որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանի 2024 թվականի մայիսի 20-ի դիմումը՝ կառուցապատման իրավունքով իր կողմից օգտագործվող 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու մասին.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանի կողմից կառուցապատման իրավունքով օգտագործվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար մակերեսով հողամասը /Կառուցապատման իրավունքի Վկայական՝ N 06102023-08-0039, համայնքի սեփականության իրավունքի Վկայական՝ 20102022-08-0002/ գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, 70172

/յոթանասուն հազար մեկ հարյուր յոթանասուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարով, վաճառել քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանին (հետագայում Գնորդ, բնակության հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսի փողոց, շենք 10, բնակարան 4, անձնագիր՝ AV0491489 տրված՝ «26» հոկտեմբերի 2022թվական, 022-ի կողմից):

2. Սույն որոշումից բխող իրավունքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Գնորդի միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 11	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	_____	_____	_____
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	_____	_____	_____
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	_____	_____	_____
Ա. ՇԱԲՈՅԱՆ	_____	_____	_____
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	_____	_____	_____
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	_____	_____	_____
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	_____	_____	_____
Ն. ՍԱՐՈՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԵՆՈՔՅԱՆ	_____	_____	_____
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	_____	_____	_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<26>> սեպտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ